

# **ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

## **ՀԱԿՈՒՔ ՎԱՐԴԱՆԻ ԱՎՉՅԱՆ**

### **ԹԱԼԻՇԵՐԵՆԻ ԱՆԲԱՐԱՆԻ ԲԱՐԲԱՌԸ**

**Ժ.02.06 «ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## **ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2016**

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

**Գիտական ղեկավար՝**

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ Վ. Ս. Ոսկանյան

**Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Վ. Շուլցե

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Վ. Փարսադանյան

**Առաջատար  
կազմակերպություն՝**

Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2016թ. մայիսի 23-ին՝ ժամը 15<sup>00</sup>-ին ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. ապրիլի 20-ին:

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝**

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Ն. Ս. Սիմոնյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### ՆԵՐԱՍՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կասպից ծովի հարավարևմտյան ափին՝ հարավ-արևելքից մինչև հյուսիս ձգվող մերձափնյա գոտում բնակվող թալիշների լեզվի ուսումնասիրության պատմությունը սկիզբ է առնում 19-րդ դարի առաջին կեսերին, երբ Լոնդոնում 1842թ. լույս է տեսնում լեհ իրանագետ Ալ. Խոձկոյի “Specimens of the popular poetry of Persia” աշխատությունը, որի միջոցով էլ փաստացիորեն թալիշերենի նյութն առաջին անգամ ընդգրկվում է իրանական լեզվաբանության ոլորտ:

Իրանական լեզուների հյուսիսարևմտաիրանական խմբի մեջ մտնող թալիշերենը մի շարք հնչյունական, ձևաբանական և բառապաշարային հատկանիշների հիման վրա սովորաբար բաժանվում է երեք բարբառախմբի՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային: Թալիշերենի Անբարանի բարբառը մտնում է հյուսիսային բարբառախմբի մեջ. այն տարածված է Իրանի Արդաբիլ նահանգի Նամին վարչաշրջանի Անբարան շրջանում, հյուսիսային թալիշերենի ամենահարավային բարբառն է և հարավից սահմանակցում է թալիշերենի կենտրոնական բարբառախմբին:

### ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թալիշերենի Անբարանի բարբառի ուսումնասիրության արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ հյուսիսային թալիշական բարբառների ուսումնասիրությանը վերաբերող աշխատանքները գրեթե բացառապես նվիրված են Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառներին ու խոսվածքներին, այնինչ նույն հյուսիսային բարբառախմբի մեջ մտնող Անբարանի բարբառը մինչ օրս համապարփակ ուսումնասիրության չի ենթարկվել, իսկ դրան կատարված սակավաթիվ անդրադարձները մակերեսային են ու թերի հիմնականում ոչ մեծ ակնարկների տեսքով: Բացի այդ լեզվաբանական տարբեր մեթոդների (նկարագրական, պատմահամեմատական, տիպաբանական) կիրառությամբ գրված այս աշխատանքը խիստ արդիական է նաև ցեղակից լեզուների ու բարբառների մի շարք կարևոր հարցերի լուծման ու պարզաբանման տեսակետից, ինչպես նաև կարող է հիմք ծառայել թալիշերենի ներքին բարբառային բաժանման ասպարեզում վերանայումների և ճշգրտումների համար:

### ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՂԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակը Իրանի Իսլամական Հանրապետության Արդաբիլ նահանգի Անբարանի շրջանի համանուն քաղաքում և դրան հարակից Ամինջան ու Մինաբադ գյուղերում իրականացրած դաշտային աշխատանքների ընթացքում ձեռք բերված նյութի և թեմային առնչվող տպագիր գրականության հիման վրա թալիշերենի Անբարանի բարբառի համաժամանակյա և տարածամանակյա ուսումնասիրությունն է՝ հետևյալ խնդիրների առաջադրմամբ.

1. Համապարփակ կերպով ներկայացնել Անբարանի բարբառի ցայսօր քիչ հայտնի կամ բոլորովին անհայտ լեզվական նյութը:

2. Լեզվաբանական մեթոդների կիրառությամբ այդ նյութը ենթարկել համակողմանի վերլուծության:

3. Թալիշերենի Անբարանի բարբառի լեզվական նյութը համեմատության մեջ դնել Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող հյուսիսթալիշական մյուս տարբերակների հետ՝ վեր հանելով դրանց միջև առկա ընդհանրությունները և հատկապես տարբերությունները:

4. Անբարանի բարբառի քերականության զանազան ասպեկտները քննության առնել ժամանակակից պարսից լեզվի, ինչպես նաև արևմտաիրանական մի շարք այլ լեզուների, որոշ դեպքերում՝ նաև ադրբեջաներենի համեմատությամբ:

5. Մասնակի տարածամանակյա կտրվածքով ուսումնասիրության ենթարկել Անբարանի բարբառի քերականական համակարգը, հատկապես դրա հնչյունաբանությունը:

6. Առանձնացնել հնչյունական համակարգի պատմական այն զարգացումները, որոնցով Անբարանի բարբառը կապվում է հյուսիսարևմտաիրանական այլ լեզուների ու բարբառների հետ:

### **ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ թալիշերենի հյուսիսային բարբառախմբի մեջ մտնող Անբարանի բարբառը առաջին անգամ է ենթարկվում համակողմանի ու մանրամասն քննության լեզվաբանական տարբեր, այդ թվում՝ նկարագրական, պատմահամեմատական, տիպաբանական մեթոդների կիրառությամբ: Հնչյունական համակարգը ներկայացված է համաժամանակյա և տարածամանակյա կտրվածքներով՝ հնչյունական զարգացումները համեմատության մեջ դնելով մի շարք ցեղակից լեզուների ձայնավորական ու բաղաձայնական համակարգերի հետ: Ատենայնություն մեջ առաջին անգամ համեմատության մեջ են դրվում հյուսիսային թալիշերենի երկու բարբառների՝ ադրբեջանաբնակ և անբարանաբնակ թալիշերենի լեզուների հնչյունաբանությունը, ձևաբանությունը և բառապաշարը:

### **ԱՏԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն ատենախոսության արդյունքները գործնական արժեք կարող են ունենալ թալիշերենի բարբառային բաժանման, տարբեր բարբառախմբերի միջև հարաբերակցության խնդիրների լուծման համար: Բացի այդ՝ աշխատանքում տեղ գտած դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ցեղակից լեզուների և բարբառների պատմության՝ հատկապես Ստրպատականի լեզվական պատկերի մինչ այժմ վերջնական լուծում չստացած որոշ հիմնահարցերի վրա լույս սփռելու խնդրում: Գործնականում աշխատանքը կարող է հիմք հանդիսանալ նաև իրանական բարբառագիտության շրջանակներում թալիշերենի դասընթացի ու դասագրքի ստեղծման համար:

## **ԱՍԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Որպես աստենախոսության մեթոդական հիմք՝ ծառայել են նկարագրական, պատմահամեմատական և տիպաբանական համեմատության մեթոդները. նկարագրական մեթոդի կիրառմամբ հանգամանորեն ու մանրակրկիտ կերպով ներկայացվել է բարբառի ողջ լեզվանյութը՝ հնչյունաբանության, ձևաբանության և բառապաշարի խնդիրների համակողմանի լուսաբանմամբ: Պատմահամեմատական մեթոդի օգնությամբ համաժամանակյա ու տարաժամանակյա կտրվածքներով ներկայացվել է բարբառի հնչյունական համակարգը, ինչպես նաև մի շարք բառային միավորներ՝ դրանք համեմատության մեջ դնելով իրանական մի շարք լեզուների հետ: Որոշ խնդիրներ, որոնց լուծումն անհնար էր նկարագրական ու պատմահամեմատական մեթոդների օգնությամբ, լուծվել են տիպաբանական համեմատության եղանակով:

## **ԱՍԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Ժամանակագրական առումով աստենախոսությունն ընդգրկում է իրանական լեզուների, այդ թվում՝ Անբարանի բարբառի և թալիշական այլ բարբառների ու խոսվածքների զարգացման բոլոր փուլերը՝ հին իրանական լեզվադարաշրջանից մինչև միջին իրանական լեզվադարաշրջան և նոր ու ժամանակակից իրանական լեզուներ ու բարբառներ: Աշխատանքում, բացի դաշտային աշխատանքների ընթացքում հավաքած լեզվանյութից, վերլուծության է ենթարկվել թեմային առնչվող գրեթե ողջ հասանելի գրականությունը՝ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև ժամանակակից հրատարակությունները:

## **ԱՍԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Աստենախոսության հիմնական դրույթները ներկայացվել են «Արևելագիտության հարցեր» գիտական հոդվածների պարբերական ժողովածուում, «Կանթեդ» պարբերականում և «Էջմիածին» հանդեսում: Որոշ դրույթներ քննարկվել են նաև հանրապետական ու միջազգային գիտաժողովների ժամանակ. «Նախադասության երգատիվ կառույցը թալիշերենում» զեկուցումը ներկայացվել է 2013թ. Երևանում կայացած «Երիտասարդ արևելագետների հանրապետական 34-րդ գիտաժողովի» ժամանակ: Երևանում 2014թ. մայիսի 16-17-ին տեղի է ունեցել “The 1<sup>st</sup> International Conference on Tati Studies” գիտաժողովը, որի ժամանակ կարդացվել է զեկուցում «Талышский и татский языки: иранская контактная зона на Кавказе» թեմայով: Քեմբրիջում 2015թ. ապրիլի 8-9-ին կայացած “The second biennial Symposia Iranica” միջազգային գիտաժողովի շրջանակներում ներկայացվել է զեկուցում “From Ergativity to Accusativity in Talysh” վերնագրով:

Աստենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում:

## **ԱՍԵՆԱՄՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից և երեք գլուխներից, որոնք բաժանված են ենթագլուխների և ենթաբաժինների, եզրակացություններից, համառոտագրությունների և գրականության ցանկերից:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ մանրամասն անդրադարձ է կատարվում թալիշերենի ուսումնասիրության պատմությանը և թեմային առնչվող գրականության քննությանը, թալիշերենի տեղին իրանական լեզուների համակարգում, դրա բարբառային բաժանմանը և աշխարհագրական տարածվածությանը:

### ԳԼՈՒԽ 1. ՀՆՁՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության այս գլխում համակողմանի քննության է առնվում թալիշերենի Անբարանի բարբառի հնչյունական ողջ համակարգը՝ պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ: Այս գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը վերնագրված է «Ձայնավորներ», որի քննության առարկան թալիշերենի Անբարանի բարբառի ձայնավորական համակարգն է: Թալիշերենի Անբարանի բարբառի ձայնավորական համակարգը կազմված է 7 ձայնավորներից՝ a, ā, i, e, o, u, ə, որոնցից վերջին երկուսով էլ հիմնականում արտահայտվում են գլխավոր տարբերությունները թալիշերենի Անբարանի բարբառի և մի կողմից ժամանակակից պարսկերենի, մյուս կողմից՝ հյուսիսարևմտաիրանական լեզուների մեծ մասի ձայնավորական համակարգերի միջև: Ըստ լեզվի գրաված դիրքի և բարձրացման աստիճանի՝ թալիշերենի Անբարանի բարբառի ձայնավորները կարող ենք դասակարգել հետևյալ կերպ՝

#### Աղյուսակ 1

Ըստ բարձրացման	Ըստ շարքի		
	Առաջին	Միջին	Ետին
Ստորին	a	-	ā
Միջին	e	-	o, ə
Վերին	i	-	u

Աշխատանքի տվյալ ենթագլխում առանձին-առանձին ներկայացվում է յուրաքանչյուր ձայնավորը՝ տարածամանակյա կտրվածքով՝ ցույց տալով դրանց հնչյունական պատմական զարգացումները՝ հին իրանական լեզվաբաշքումից մինչև լեզվի զարգացման ժամանակակից փուլը՝ 1. a < h. իր. \*a; 2. ā < \*a, ā; 3. i < \*ai, \*i, \*i, \*ya; 4. e < \*a, \*ai; 5. o < \*ā, \*āu; 6. u < \*au, \*ā, \*u, \*ū; 7. ə < \*i, \*i, \*u, \*ū, \*a, \*ā, \*au, \*ai:

Թալիշերենի Անբարանի բարբառի և նույն հյուսիսային բարբառախմբի մեջ մտնող Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառների ձայնավորական համակարգերի միջև տարբերությունները արտահայտվում են հիմնականում u ձայնավորի հատկանիշներում:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում թալիշերենի Անբարանի բարբառի երկբարբառներին և երկհնչյուններին. հանգում ենք այն

եզրակացության, որ այս բարբառում ներկա լեզվավիճակում բացակայում են երկբարբառները, կան *y* ձայնորդով և որևէ ձայնավորով կազմված երկհնչյուններ, որոնք նույնպես լայն տարածում չունեն:

## Աղյուսակ 2

			Ըստ արտաբերության տեղի						
			Երկ. շ.	Շրթ. ատ.	Առ.	Միջ.	Ետ.	Հագ.	
Ըստ ձայնի և արմունկի պարունակության	Ձայնեղ	Ըստ արտաբերության եղանակի	Պայթական	b	-	d	-	g	-
			Շփական	-	v	z, ž	-	γ	h
			Պայթաշփական	-	-	j	-	-	-
	Խուլ		Պայթական	p	-	t	-	k	-
			Շփական	-	f	s, š	-	x	-
			Պայթաշփական	-	-	č	-	-	-
	Ձայնորդ		Թրթռուն	-	-	r	-	-	-
			Միջնային	-	-	-	y	-	-
			Կողմնային	l	-	-	-	-	-
			Ռնգային	m	-	n	-	-	-

Երրորդ ենթագլխում լուսաբանվում են բաղաձայնական համակարգի խնդիրները: Թալիշերենի Անբարանի բարբառի բաղաձայնական համակարգը ընդհանուր առմամբ նույնն է, ինչ մյուս հարավարևմտաիրանական լեզուների բաղաձայնական համակարգերը՝ որոշ աննշան տարբերություններով: Թալիշերենի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում հեղինակները հիմնականում թալիշերենում նշում են 22 բաղաձայն հնչյուն,<sup>1</sup> թեև որոշ ուսումնասիրողներ բաղաձայնների թիվը հասցնում են 23-ի՝ դրանց շարքին դասելով նաև կոկորդային դադարը (?)<sup>2</sup> կամ երկշրթնային կիսաձայն *w*-ն:<sup>3</sup>

Աշխատանքի առաջին գլխի չորրորդ ենթագլխում, որ վերնագրված է «Անբարանի բարբառը հյուսիսարևմտաիրանական լեզուներին կապող հնչյունական զուգաբանությունները», մանրամասն քննարկվում են այս բարբառի հնչյունական համակարգի պատմական այն զարգացումները, ըստ որոնց թալիշերենի Անբարանի բարբառը ընդգրկվում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան խմբի մեջ:

## ԳԼՈՒԽ 2. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> S e' u **Миллер Б.**, Талышский язык, Москва, 1953, стр. 57; **Л. Пирейко**, Талышско-русский словарь, Москва, 1976, стр. 323; **Пирейко Л.**, Талышский язык. Диалекты Тати Ирана // Основы иранского языкознания. Новоиранские языки: северо-западная группа I, Москва, 1991, стр. 104.

<sup>2</sup> **Amiriān-Budālālu R.**, Guyeš-e tāleši-e Anbarān-e Ardabil (Vilkij), Tehrān, 2005, p. 33.

<sup>3</sup> **Yarshater E.**, The Taleshi of Asālem // Studia Iranica, vol. 25.1, p. 85.

Ատենախոսության այս բաժնում պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ քննության է առնված թալիշերենի Անբարանի բարբառի ձևաբանությունը՝ այն համեմատության մեջ դնելով ինչպես հյուսիսային թալիշերենի Ադրբեջանական Հանրապետության տարածքի բարբառների ու խոսվածքների, այնպես էլ ժամանակակից պարսկերենի և մի շարք այլ իրանական լեզուների քերականական կարգերի հետ:

Հիմնական քերականական կարգերից թալիշերենի Անբարանի բարբառում գոյականին հատուկ են թվի և հոլովի կարգերը, ինչպես նաև որոշյալության և անորոշության առումը: Թալիշերենի Անբարանի բարբառում գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակի թիվը այս բարբառում ձևաբանորեն որևէ կերպ արտահայտված չէ, այսինքն՝ գոյականի եզակի թիվը համապատասխանում է բառի ուղիղ ձևին: Ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, որում տարբերակվում է երկու հիմնական հոգնակիակերտ վերջածանց (-hā և -ān) կախված գոյականի շնչավոր կամ անշունչ լինելուց, Անբարանի թալիշական բարբառում կա հոգնակի թվի կազմման միայն մեկ եղանակ՝ -un (-n, -on) հոգնակիակերտ վերջածանցի օգնությամբ, օրինակ՝ ženun «կանայք», pasun «ոչխարներ», kinan «աղջիկներ», doon «ծառեր» և այլն:

Անբարանի բարբառում գոյականն ունի երկու հոլով՝ ուղիղ և թեք. ուղղական հոլովով դրված գոյականը ունի գրո վերջավորություն, թեք հոլովով դրված գոյականը ստանում է -ə (թալիշական այլ բարբառներում՝ -i) հոլովական վերջավորություն: Միլլերը այն հանգեցնում է հին պարսկերենի hya հարաբերական դերանվանը՝ սխալմամբ կոչելով այն հին պարսկական ցուցական դերանուն:<sup>4</sup> Ըստ Շուլցեի՝ հոլովական այս վերջավորությունը համապատասխանում է հին պարսկերենի -a հիմքով բառերի եզակի թվի սեռական հոլովի -ahyā ցուցիչին,<sup>5</sup> որն էլ իր հերթին հանգում է հին իր. \*-ahya հոլովական վերջավորությանը:<sup>6</sup> Թալիշերենի Անբարանի բարբառում, ի տարբերություն Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառների, ձայնավորով վերջացող բառերի ուղիղ և թեք հոլովների հակադրությունը անհետացել է: Եթե վերոնշյալ բարբառներում ձայնավորով վերջացող բառերը թեք հոլովով դրվելիս բառավերջի ձայնավորի և -i հոլովական վերջավորության միջև հորանջից խուսափելու համար կարող են ստանալ -n-, օրինակ՝ ուղղ. h. kina «աղջիկ», թ. h. kinani,<sup>7</sup> ապա Անբարանի բարբառում ձայնավորահանգ բառերը թեք հոլովում պարզապես -ə ցուցիչ չեն ստանում՝ ձևով ամբողջովին համընկնելով ուղիղ հոլովաձևի հետ, օրինակ՝ **neči** uma «Գայլը եկավ», սսճի **neči** kəštəše «Որսորդը սպանեց գայլին», **neči** pasəš hārde «Գայլը ոչխարին կերավ»:

Գոյականն ունի երկու առում՝ որոշյալ և անորոշ: Թալիշերենի Անբարանի բարբառում նախադասության մեջ որոշյալ առումով գործածված գոյականը չի

<sup>4</sup> Миллер Б., նշ վ . աշ խ. , էջ 79:

<sup>5</sup> Schulze W., Northern Talysh, Muenchen, 2000, p. 17.

<sup>6</sup> Windfuhr W., Cases // Encyclopædia Iranica (ed. E Yarshater), Vol. V: Carpets-Coffee, Costa Mesa, California, Mazda Publishers, p. 27.

<sup>7</sup> Пирейко Л., նշ վ . աշ խ. , 1991, էջ 127:



ստանում քերականական որևէ հատուկ ցուցիչ կամ հոդ, այսինքն՝ համապատասխանում է բառի ուղիղ ձևին: Անորոշ առումով գործածված եզակի թվով դրված գոյականից առաջ դրվում է *ila* բառը, որը բաղկացած է *i* «մի, մեկ» թվականից և *la* բառից, որը ժամանակակից թալիշերենում առանձին գործածություն չունի, և *F*: Միլլերը այն կապում է ժամանակակից պարսկերեն *lā* «շերտ, ծալք» բառի հետ, որը փոխաբերական իմաստով նշանակում է նաև «սնգամ»:Ց

Ածականները ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ ածականները Անբարանի թալիշական բարբառում, ինչպես ժամանակակից հայերենում և պարսկերենում, արտաքննապես ոչնչով չեն տարբերվում գոյականներից, այսինքն՝ օժտված չլինելով որևէ ձևաբանական ցուցիչով՝ դրանք հենց բառարմատներ են, օրինակ՝ *yul* «մեծ», *čuk* «լավ», *səpi* «սպիտակ», *tərs* «թթու», *kuk* «գեր» և այն: Բաղադրյալ ածականները իրենց հերթին բաժանվում են ածանցավոր և բարդ ածականների: Ածականակերտ ածանցները թալիշերենի Անբարանի բարբառում այնքան էլ մեծաթիվ չեն. ածանցավոր ածականները կազմվում են հիմնականում հետևյալ ածանցների օգնությամբ՝ *-in* < հին իր. *-\*ayna-* (*səyin* «քարե», *uvin* «ջրիկ, ջրալի, ջրային»), *-mand* (*xaymand* «բարի», *əyəlmand* «խելացի»), *-li* (*gadali* «փոքր»), *be-*, *no-* (*bedāndun* «անատամ», *nodon* «տգետ») և այլն: Բարդ ածականների կազմման համար գոյություն ունեն հետևյալ կաղապարները՝ ածական + գոյական (կամ հակառակ շարադասությամբ), օրինակ՝ *šinaxun* «քաղցրարյուն, հաճելի», *dəlnām* «փափկասիրտ, բարի»; թվական + գոյական, օրինակ՝ *dətarafa* «երկկողմանի», *čurčəxin* «քառանիվ», գոյական + բայահիմք, օրինակ՝ *dəlasut* «համակրելի, հաճելի», դերանուն + գոյական + (*-na*, *-in*, և այլն), օրինակ՝ *əmrəžna* «այսօրվա» և այլն:

Թալիշերենը պատմական զարգացման ընթացքում կորցրել է որակական ածականների համեմատության աստիճանների ձևաբանական հատուկ ցուցիչները: Այստեղ ածականի բաղդատական աստիճանը արտահայտելու համար հիմնականում գործածվում է *-sa* հետադրությունը, որի հետ կարող են գործածվել նաև *xayli*, *vəyi* «շատ» բառերը, օրինակ *čama ka šəma ka sa yul-e* «Մեր տունը ձեր տնից մեծ է»: Չկա ձևաբանական հատուկ ցուցիչ նաև ածականի գերադրական աստիճանի համար: Այն արտահայտելու համար կրկին գործածվում է բացառական հոլովի իմաստ արտահայտող *-sa* հետադրությունը և *hama* «բոլոր, ամեն» դերանունը, այսպես, օրինակ *hama sa bārza do dənyo anda čəmān buy anday* «Աշխարհի ամենաբարձր ծառը իմ այգում է»:

Անբարանի բարբառում որոշիչ-որոշյալ կապակցության դեպքում որոշիչը դրվում է որոշյալից առաջ՝ ընդունելով *-a* վերջածանց, օրինակ՝ *māhbuba kina* «գեղեցիկ աղջիկ», *yula šahr* «մեծ քաղաք» և այլն: Չայնավորով վերջացող ածականների հետ այդ վերջածանցը հիմնականում չի դրվում, օրինակ՝ *siyu mašū* «սև կոշիկ», *gada ka* «փոքր տուն»: Ի ձայնավորով վերջացող ածականները սովորաբար որոշիչ-որոշյալ կապակցության մեջ ընդունում են *-a* վերջածանց, օրինակ՝ *gadalia əv* «փոքր ամպ», *ruania gužt* «ճարպոտ միս» և այլն:

<sup>8</sup> Миллер Б.,      նշափ խ., էջ 128:

Թալիշերենի Անբարանի բարբառում կարող ենք առանձնացնել թվականների հետևյալ հիմնական տեսակները՝ քանակական, դասական, կոտորակային և բաշխական:

Թալիշերենի Անբարանի բարբառում, որտեղ հոլովական համակարգը երկհոլով է՝ ուղիղ և թեք հոլովների հակադրությամբ, բազմազան հոլովական իմաստների արտահայտման համար գործածվում են մի շարք նախդիրներ և հետադրություններ, ինչպես նաև դրանց համադրությունները. հիմնական նախդիրներն են ճօ, ba, be, da, tã: Բառերի միջև զանազան շարահյուսական կապերի և հոլովական իմաստների արտահայտման համար թալիշերենի Անբարանի բարբառի հիմնական կիրառվող հետադրությունները հետևյալն են՝ ku, o, anda, døl, ro, žiu, piu, sa, nã, pešt:

Դերանունները թալիշերենի Անբարանի բարբառում հետևյալներն են՝ անձնական, անձնական-կցական, ստացական, ցուցական, հարցական-հարաբերական, անդրադարձ, փոխադարձ, որոշյալ, անորոշ և ժխտական, որոնց մի մասին հատուկ է հոլովի քերականական կարգը, օրինակ՝ āz «ես», mãn(օ) «ինձ» և այլն:

Թալիշերենի Անբարանի բարբառում (ինչպես շատ այլ լեզուներում) բայն աչքի է ընկնում իր քերականական կարգերի և ձևերի հարստությամբ ու բազմազանությամբ. այն ունի եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, հակադարձման և բայասեռի կարգեր: Թալիշերենում առանձնահատուկ կարևորություն ունի նաև բայի անցողականության հատկանիշը. բայի անցողական կամ անանցողական լինելը նախադասության՝ երգատիվ կառույց ունենալու պայմաններից մեկն է:

Ըստ կազմության՝ բայերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ պարզ, ածանցավոր և բաղադրյալ:

Իրանական լեզուներին հատուկ երկհիմք (ներկայի հիմք/անցյալի հիմք) բայական խոնարհման համակարգը թալիշերենի Անբարանի բարբառում խիստ աղճատված է. բայերի մեծ մասը պատմական զարգացման ընթացքում կորցրել է հիմքերից մեկը, և այսօր էլ երկհիմք բայական խոնարհման համակարգից միահիմք համակարգի անցման գործընթացը ինտենսիվ կերպով շարունակվում է:

Թալիշերենի Անբարանի բարբառում կարելի է առանձնացնել չորս դերբայ՝ անորոշ, անցյալի, ներկայի և ապառնիի:

Դիմային վերջավորությունները Անբարանի թալիշական բարբառում ունեն կարևոր նշանակություն, քանզի բացի գործողության դեմքից ու թվից՝ ցույց են տալիս նաև բայի եղանակը և ժամանակը: Դիմային վերջավորությունների համար, ըստ եղանակային և ժամանակային հատկանիշների, կարող ենք տարբերակել հետևյալ տիպերը՝

**Աղյուսակ 3**

Եղանակ	Սահմ.	Ըղձ.	Պ. ս.	Հր.
--------	-------	------	-------	-----

Ժամանակաձև	Ն.	Անց. կ.	Ապ.	Ն.-ապ.	Ն.- ապ.	Ն.
Եզ. թ. 1	-m	-im/-em	-em	-um/-om	-əm	-
Եզ. թ. 2	-š	-iš	-eš	-uš/-oš	-i <sup>9</sup>	-ø
Եզ. թ. 3	-y	-i	-e	-u/-o	-ə	-
Հնգ. թ. 1	-mun	-imun	-emun	-umun/ -omun	-əmun	-
Հնգ. թ. 2	-n	-in	-en	-un	-ən	-ān
Հնգ. թ. 3	-n	-in	-en	-un	-ən	-

Թալիշերենի Անբարանի բարբառում բայի եղանակային ու ժամանակային ձևերի համար գործածվում են bə-, ba-, a- նախամասնիկները, իսկ այդ ձևերի ժխտական խոնարհման համար՝ nə- և ma- ժխտական նախամասնիկները իրենց տարբերակներով:

Թալիշերենի Անբարանի բարբառում բայն ունի չորս եղանակ՝ հրամայական, սահմանական, պայմանական-ստորադասական և ըղձական:

Գործողության կատարման հրաման, հարկադրանք, կոչ, խնդրանք արտահայտող հրամայական եղանակը թալիշերենի Անբարանի բարբառում ունի միայն ներկա ժամանակաձև և միայն եզակի և հոգնակի թվերի երկրորդ դեմք: Եզակի թվի երկրորդ դեմքի համար այն կազմվում է bə- նախամասնիկից և միահիմք բայերի միասնական կամ երկհիմք բայերի ներկայի հիմքից՝ առանց որևէ դիմային վերջավորություն, իսկ հոգնակի թվի երկրորդ դեմքի համար ավելանում է նաև -ān դիմային վերջավորությունը, ինչպես gate - bəgat «վերցրու », bəgatān «վերցրե՛ք»; hətə - bəhət «քնի՛ր», bəhətān «քնե՛ք»; hārde - bəhā «կե՛ր», bəhān «կերե՛ք» և այլն:

Թալիշերենի Անբարանի բարբառում ստույգ կերպով կատարված, կատարվող և կատարվելիք գործողություն ցույց տվող սահմանական եղանակը ունի 6 ժամանակաձև՝ ներկա, անցյալ կատարյալ, անցյալ անկատար, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ և ապառնի: Թալիշերենի Անբարանի բարբառում և ընդհանրապես հյուսիսային թալիշերենում բացակայում են ներկա շարունակական և անցյալ շարունակական ժամանակաձևերը՝ ի տարբերություն ժամանակակից պարսկերենի և կենտրոնական ու հարավային թալիշական բարբառների:

Թալիշերենի Անբարանի բարբառում ցանկության, նպատակի, պայմանի, հնարավորության և այլնի հետ կապված իրապես չկատարվող գործողությունն արտահայտվում է պայմանական-ստորադասական և ըղձական եղանակների ժամանակաձևերով: Այս բարբառում սույն եղանակները զգալիորեն բաղադրված են, ներկայումս ըղձական եղանակի ներկա-ապառնին պայմանական-ստորադասականի ներկա-ապառնու համեմատ ավելի հազվադեպ կիրառություն ունի, բայց և այնպես դրանք հանգիստ կարող են կիրառվել մեկը մյուսի փոխարեն:

<sup>9</sup> Պայ մ ան ակ ան -ստոր ր ադ աս ակ ան և ըղձ ակ ան եղ ան ակ ն երի ն երկա-ապառ նի ժամ ան ակ ան և երի եզ ակի թվի երկրորդ դեմքի դիմային վերջավորությունը փոխառություն և է պարսկերենից:

Բացի այդ՝ անցյալ ժամանակաձևերի համար դրանք ունեն մեկ ընդհանուր ժամանակաձև: Թալիշերենի Անբարանի բարբառում բային հատուկ է նաև սեռի քերականական կարգը: Բայի սեռը արտահայտում է բայի արտահայտած գործողության և այդ գործողության մասնակիցների փոխհարաբերությունները, այլ կերպ ասած՝ բայի սեռի քերականական կարգը ցույց է տալիս քերականական ենթակայի ու խնդրի, տրամաբանական սուբյեկտի ու օբյեկտի փոխհարաբերությունը, որն իր դրսևորումն է գտնում բայաձևի մեջ:<sup>10</sup> Ըստ այդմ՝ թալիշերենի Անբարանի բարբառում բայն ունի երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք:

Մակբայները գործողության հատկանիշ և հատկանիշի հատկանիշ ցույց տվող բառերը, թալիշերենի Անբարանի բարբառում իմաստային առումով կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ժամանակի, տեղի, ձևի և չափ ու քանակի:

Ըստ շարահյուսական կապակցության եղանակի՝ թալիշերենի Անբարանի բարբառում կարող ենք առանձնացնել շաղկապների երկու խումբ՝ համադասական շաղկապներ (bə «և, ու», valı «բայց», ya «կամ», -an «էլ, իսկ» և այլն) և ստորադասական շաղկապներ (ki «որ», (a) vāxt ki «երբ, երբ որ», agar «եթե», agar čə «չնայած, չնայած որ» և այլն):

Թալիշերենի Անբարանի բարբառի քերականության առանձնահատկություններից մեկը երգատիվ համակարգի գոյությունն է, որը թեև մի շարք ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ աստիճանաբար վերանում է, այնուամենայնիվ ներկայիս լեզվավիճակում այն դեռևս բավականին կենսունակ է և անհամեմատ ավելի լավ է պահպանված, քան ադրբեջանաբնակ թալիշների լեզվում:

### ԳԼՈՒԽ 3. ԲԱՌԱՊԱՇԱՐ

Ուսումնասիրության երրորդ գլուխը նվիրված է թալիշերենի Անբարանի բարբառի բառապաշարին և դրա զանազան շերտերին: Անբարանի բարբառի հիմնական բառաֆոնդը կազմված է գլխավորապես հետևյալ իմաստային խմբերից՝

1) Մարմնի մասերի և նյութերի անվանումներ, ինչպես, օրինակ sa «գլուխ», guš «ականջ», čaš «աչք», bāv «ունք», vəni «քիթ», gav «բերան», ləv «շուրթ» և այլն:

2) Ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառեր, օրինակ dada «հայր», nana «մայր», žen «կին», merd, šua «ամուսին», pia dada «պապիկ», pia nana «մայրիկ», bəva «եղբայր», hoa «քույր», xāla «մորաքույր», māma «հորաքույր», dəyi «քեռի», māmū «հորեղբայր» և այլն:

3) Կենդանական աշխարհի ներկայացուցիչների անվանումներ, օրինակ səpa «շուն», pişik «կատու», āsb «ձի», go «կով», pas «ոչխար», gug, va, vača «գառ», bəz «այծ», xok «խոզ», kāg «հավ», suk «աքաղաղ», neči «գալլ», rəvus «աղվես» և այլն:

4) Բնության երևույթների ու առարկաների անվանումներ, օրինակ kuluk «անձրև», vā(r) «ձյուն», tāyarz «կարկուտ», vo (vu) «քամի», sorəy, av «մառախուղ», ava čaku «կայծակ, ամպրոպ», zalzala «երկրաշարժ», oveyz «ջրեղեղ» haši «արև», usəm «լուսին» և այլն:

<sup>10</sup> Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզուն : Ձևաբանություն, Երևան, 1989, էջ 203:

5) Բուսական աշխարհի հետ կապված բառեր, ծառերի, ծաղիկների տեսակների անվանումներ՝ bema, giāh «բույս», do (du) «ծառ», vāl «ծաղիկ», liva «տերև», yonča «կոկոն», nargis «նարգիզ», sō vāl «վարդ» և այլն:

6) Տարբեր սննդամթերքի, մրգերի, բանջարեղենների անվանումներ՝ nun «հաց», nemek «աղ», pani «պանիր», kara «կարագ», ruan «յուղ», bōrz «բրինձ», xāma «թթվասեր», šēt «կաթ», māst «մածոն», du «թան», uya «ձու» և այլն:

7) Աշխատանքային տարբեր գործիքների, սպասքի և խոհանոցային տարբեր պարագաների անվանումներ՝ tava, balta «կացին», čakuš «մուրճ», ara «սղոց», oku, rānda «փոցի», bur «բահ» և այլն:

8) Ամենօրյա կենցաղի հետ կապված առարկաների անվանումներ՝ ka «տուն», hayāt «բակ», buy «այգի», ba «դուռ», penja «պատուհան», itoy «սենյակ», kāfi «հատակ», sayf «առաստաղ», divo «պատ», miz «սեղան», sandal «աթոռ» և այլն:

9) Որակ, հատկանիշ, չափ և ձև ցույց տվող բառեր՝ čok (čuk) «լավ», bevaj «վատ», yol (yul) «մեծ», gada, gadali «փոքր», māhbus «գեղեցիկ», besurt «տգեղ» և այլն:

10) Արհեստների, մասնագիտությունների անվանումներ՝ šair «բանաստեղծ», muale «ուսուցիչ», boybun (buybun), buyavun «այգեգործ» և այլն:

11) Վարչական բաժանումների, բնակավայրերի անվանումներ՝ kišvār «երկիր», šahr «քաղաք», di «գյուղ», malla «թաղամաս», xiābun, kuča «փողոց», viloyat, ostān «մարզ» և այլն:

12) Դերանուններ, թվականներ, շաղկապներ:

Թալիշերենի Անբարանի բարբառի բառապաշարում, ըստ ծագման, կարելի է առանձնացնել երկու հիմնական բառաշերտ՝ բնիկ բառեր և փոխառություններ, որոնք իրենց հերթին կարող են տրոհվել տարբեր ենթախմբերի՝ պայմանավորված զանազան չափորոշիչներով:

Մենք առանձնացրել ենք բնիկ բառերի երկու հիմնական խումբ՝ համաիրանական բառեր և մերձկասպյան ու թալիշ-նորագարիական բնիկ բառային զուգաբանություններ: Համաիրանական բնիկ բառերի խմբի մեջ մտնում են թալիշերենի Անբարանի բարբառի այն բառային միավորները, որոնք թալիշերենի բառային կազմ են մտել իրանական նախալեզվից և համաիրանական տարածում ունեն, այսինքն՝ առկա են իրանական լեզուների մեծ մասում անկախ այն հանգամանքից, թե բարբառային որ խմբին են դրանք պատկանում, օրինակ՝ sa «զուլվ» < հ. իր. \*sarah-, čaš «աչք» < հ. իր. \*čašman-, guš «ականջ» < հ. իր. \*gauša-, bōva «եղբայր» < հ. իր. \*brātar-, penj «հինգ» < հ. իր. \*panja-, āz < հ. իր. \*azam- և այլն: Մերձկասպյան և թալիշ-նորագարիական (թաթական) բնիկ բառերի խմբի մեջ ներառել ենք թալիշերենի Անբարանի բարբառի՝ համաիրանական տարածում չունեցող բառերի երկու ենթախումբ՝ բառեր, որոնք, բացի թալիշերենից, բացառապես կամ հիմնականում առկա են նաև հյուսիսարևմտաիրանական լեզուների մերձկասպյան խմբի այլ լեզուներում, և բառեր, որոնք հատուկ են թալիշերենին կամ բացի թալիշերենից հանդիպում են նաև միայն նորագարիական (թաթական) խոսվածքներում, ինչպես, օրինակ, ka «տուն» < հ. իր. \*kata-, kina «աղջիկ» < հ. իր. \*kanya-, zua «տղա» < հ. իր. \*zāta-, šēt «կաթ» < հ. իր. \*ššvipta- և այլն:

Թալիշերենի Անբարանի բարբառի վրա ժամանակակից պարսկերենն ունի հսկայական ազդեցություն, որը, բնականաբար, առաջին հերթին պետք է տարածվեր այս բարբառի բառային կազմի վրա:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով և ի մի բերելով մեր ուսումնասիրության մեջ տեղ գտած հիմնական դրույթները՝ կարող ենք եզրակացնել, որ.

1. Թալիշերենի բարբառային բաժանման խնդրում թեև դեռևս կան հստակեցման կարիք ունեցող բազմաթիվ հարցեր ու դրույթներ, այնուամենայնիվ ներկայումս իրանագիտական գրականության մեջ ավանդաբար ընդունվող «հյուսիսային-կենտրոնական-հարավային թալիշական բարբառներ» բաժանման դեպքում Անբարանի բարբառի տեղը հստակ է. չնայած Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառների և Անբարանի բարբառի միջև առկա թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական որոշ տարբերությունների՝ թե՛ վերոնշյալ բարբառները և թե՛ մեր ուսումնասիրության առարկա բարբառը աներկբայորեն մտնում են միևնույն՝ հյուսիսային թալիշական բարբառախմբի մեջ առանձնանալով կենտրոնական և հարավային թալիշական բարբառներից:

2. Ադրբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառները և Անբարանի բարբառը, պատկանելով միևնույն՝ հյուսիսային թալիշերենի բարբառախմբին, այնուամենայնիվ ցուցաբերում են նաև զգալի տարբերություններ, որոնք հատկապես նկատելի են ձևաբանության մեջ: Այս տարբերություններով հանդերձ՝ ադրբեջանաբնակ և անբարանաբնակ թալիշների բարբառները ընդհանուր առմամբ ապահովում են երկու հանրույթների միջև լեզվական փոխըմբռնումը:

3. Թալիշերենի Անբարանի բարբառի հնչյունական համակարգը ընդհանուր գծերով նույնական է մյուս արևմտաիրանական լեզուների հետ. օրինակ, ժամանակակից պարսկերենի ու թալիշերենի Անբարանի բարբառի բաղաձայնական համակարգերի միակ տարբերությունը վերջինում կոկորդային դադարի Շ (?), բացակայությունն է: Չայնավորական համակարգերը տարբերվում են Անբարանի բարբառում ռ ձայնավորի առկայությամբ, որը բացակայում է ժամանակակից պարսկերենում, ինչպես նաև ւ ձայնավորի հատկանիշներով. էթե Անբարանի բարբառում ւ ձայնավորը երբեմն հանդես է գալիս որպես առաջնալեզվային ձայնավոր, ապա ժամանակակից պարսկերենում այն բացառապես հետնալեզվային է:

4. Հնչյունաբանության տեսակետից Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառների և Անբարանի բարբառի բաղաձայնական համակարգերը գրեթե նույնական են. տարբերությունները այս երկու բարբառների միջև ի հայտ են գալիս ձայնավորական համակարգում. հաճախ ադրբեջանաբնակ թալիշների լեզվի օ ձայնավորին Անբարանի բարբառում համապատասխանում է ւ ձայնավորը, օրինակ Ադրբ. թալ. do = թալ. Անբ. du «ծառ», Ադրբ. թալ. zoa = թալ. Անբ. zua «տղա, որդի» և այլն: Սա բացատրվում է թալիշերենում հին իրանական \*ā-ին հանգող օ ձայնավորի նեղացման հետևանքով ւ ձայնավորի առաջացման միտումով, որն առկա է նաև Ադրբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում, սակայն անհամեմատ ավելի հազվադեպ երևույթ է, քան Անբարանի բարբառում:

5. Չայնավորական համակարգերի մեկ այլ տարբերություն առնչվում է ւ ձայնավորի հատկանիշների հետ: Եթե ադրբեջանաբնակ թալիշների լեզվում այս

ձայնավորը աղբբեջաներենի ազդեցության հետևանքով բառերի մեծ մասում հանդես է գալիս որպես առաջնալեզվային ձայնավոր՝ ü կամ γ, սպա Անբարանի բարբառում այն հիմնականում հետնալեզվային ձայնավոր է:

6. Աղբբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում գոյականի թեք հոլովի -i ցուցչին Անբարանի բարբառում համապատասխանում է -ə վերջավորությունը: Ընդ որում, Անբարանի բարբառում ձայնավորահանգ բառերը, ի տարբերություն աղբբեջանաբնակ թալիշների լեզվի, թեք հոլովի ցուցիչ չեն ստանում, այսինքն՝ ձայնավորով վերջացող բառերի ուղիղ և թեք հոլովների հակադրությունը վերացել է, օրինակ՝ Աղբբ. թալ. doi baš = թալ. Անբ. du sa «ծառի գագաթ», Աղբբ. թալ. kai ba = թալ. Անբ. ka ba «սան դուռ» և այլն:

7. Թալիշերենի Անբարանի բարբառը և Աղբբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառները միմյանցից տարբերվում են նաև անդրադարձ դերանունների կիրառությամբ: Անբարանի բարբառում կա միայն մեկ անդրադարձ դերանուն՝ օժտān, որը նշանակում է և՛ «խիքը», և՛ «իր», մինչդեռ աղբբեջանաբնակ թալիշների լեզվում այս իմաստների արտահայտման համար կա երկու ձև՝ օժտān «խիքը» և օժta «իր»:

8. Մինևսյն հյուսիսային բարբառախմբի մեջ մտնող թալիշերենի Անբարանի բարբառը և Աղբբեջանական Հանրապետության տարածքում խոսվող թալիշական բարբառները մյուս՝ կենտրոնական և հարավային թալիշական բարբառներից տարբերակվում են նաև բայական համակարգի առանձնահատկություններով. բացի այն, որ բայի եղանակային ու ժամանակային ձևերը այս բարբառախմբերում կազմվում են տարբեր կերպ, դրանք տարբերվում են նաև այս կամ այն ձևի բացակայությամբ: Այսպես, Անբարանի բարբառում և Աղբբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում բացակայում են սահմանական եղանակի ներկա շարունակական և անցյալ շարունակական ժամանակաձևերը, որոնք առկա են կենտրոնական և հարավային բարբառախմբերում՝ դրանք այդ հատկանիշով մոտեցնելով ժամանակակից պարսկերենին: Այս ամենով հանդերձ՝ Անբարանի բարբառի և Աղբբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառների միջև տարբերությունները առավել կարևոր և զգալի են հենց դրանց բայական համակարգերում: Այսպիսով, այդ տարբերություններն ընդգրկում են սահմանական եղանակի ներկա ժամանակաձևի կազմությունը. եթե աղբբեջանաբնակ թալիշների լեզվում այս ժամանակաձևը կազմվում է բայի անորոշ դերբայով, -da հետադրությամբ և դիմային վերջավորություններով, սպա Անբարանի բարբառում այն ձևավորվում է երկհիմք բայերի ներկայի հիմքով կամ միահիմք բայերի միասնական հիմքով, -na հետադրությամբ և դիմային վերջավորություններով, օրինակ Աղբբ. թալ. āz še-da-m = āz ši-na-m «ես գնում եմ»:

9. Թե՛ Անբարանի բարբառում, թե՛ Աղբբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում իրանական լեզուներին հասուն կերկհիմք բայական համակարգը գտնվում է խիստ աղճատված վիճակում և ձգտում է դեպի ամբողջական միահիմքության: Այնուամենայնիվ, այս գործընթացը երկու բարբառներում էլ դեռևս ավարտված չէ, որի հետևանքով որոշ բայեր դեռևս



պահպանում են անցյալի հիմք-ներկայի հիմք հակադրությունը, իսկ մյուսներն արդեն ունեն միայն մեկ հիմք: Ինչևէ, դեպի միահիմքություն տանող զարգացումը երկու բարբառներում չի ընթանում միևնույն ճանապարհով. դա է պատճառը, որ Անբարանի բարբառում որևէ բայ կարող է արդեն դարձած լինել միահիմք, մինչդեռ նույն բայը Ադրբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում դեռևս կարող է պահպանել երկու հիմքերը, ինչպես, օրինակ՝ *doe* «տալ»՝ Ադրբ. թալ. ներկայի հիմքը՝ *da-*, անցյալի հիմքը՝ *do-*, Անբարանի բարբառում այն միահիմք բայ է՝ *do-* հիմքով:

10. Բայական համակարգում մյուս տարբերությունը սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակաձևում է: Ադրբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում այս ժամանակաձևը ունի կազմության երկու եղանակ, որոնք թե՛ իրենց արտահայտած իմաստով, թե՛ կիրառությամբ լիովին հավասարագոր են: Այս նույն երկու կազմությունները առկա են նաև Անբարանի բարբառում, սակայն այն տարբերությամբ, որ այստեղ դրանցից առաջինը արտահայտում է սահմանական եղանակի անցյալ անկատարի իմաստը [տե՛ս §2.6.8.2.3], իսկ երկրորդը թեև դեռևս նույնպես ունի անցյալ կատարյալի իմաստն արտահայտող նշանակություն, բայց մեծ մասամբ արտահայտում է պայմանական եղանակի անիրական պայմանի անցյալ ժամանակաձևի իմաստը [տե՛ս §2.6.8.3.3]:

11. Թալիշերենի Անբարանի բարբառում սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևի ժխտական խոնարհման միայն մեկ ձև գոյություն ունի (ո՛ւ ժխտական նախամասնիկի օգնությամբ), այնինչ Ադրբեջանական Հանրապետության թալիշական բարբառներում, բացի վերոնշյալ ձևից, ապառնի ժխտականի համար կիրառվում է նաև ներկայի դերբայը՝ բայ-հանգույցի ժխտական ձևերի համադրությամբ:

12. Թալիշերենի Անբարանի բարբառը թալիշական մյուս բարբառներից ու խոսվածքներից, ինչպես նաև մյուս բոլոր իրանական լեզուներից առանձնանում է նախադասության մեջ դիմային վերջավորությունների դիրքով. եթե ժամանակակից պարսկերենում դիմային վերջավորությունները մշտապես առանց որևէ բացառության ավելանում են բայաձևին, իսկ թալիշական այլ բարբառներում որպես դիմային վերջավորություններ հանդես եկող անձնական-կցական դերանունները կարող են ստորոգյալից բացի կցվել նախադասության այլ անդամների ևս միայն էրգատիվ կառույց ունեցող նախադասություններում, ապա Անբարանի բարբառում դիմային վերջավորությունները կարող են առանձնանալ ստորոգյալի շարահյուսական պաշտոնով կիրառվող բայից և կցվել նախադասության այլ անդամների թե՛ էրգատիվ, թե՛ նոմինատիվ-ակտիվ կառույցով նախադասություններում, այսինքն՝ ոչ միայն անցողական բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ, վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերում, այլև բոլոր եղանակային և ժամանակային ձևերում:

13. Թալիշերենի Անբարանի բարբառի առանձնահատկություններից մեկը նախադասության էրգատիվ կառույցի գոյությունն է, որն առկա է նաև ադրբեջանաբնակ թալիշների լեզվում, ինչպես և կենտրոնական և հարավային թալիշական բարբառներում: Պայմանավորված մի շարք ներքին և արտաքին

գործոններով՝ թալիշերենում երգատիվ կառույցը միտված է բաղարկման նումինատիվ-ակուզատիվ կառույցի հետ և, հետևաբար, աստիճանական քայքայման: Այնուամենայնիվ, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեզվի զարգացման ներկա փուլում Անբարանի բարբառում երգատիվ համակարգը անհամեմատ ավելի լավ է պահպանված ու կայուն է, քան Ադրբեջանական Հանրապետությունում տարածված թալիշական բարբառներում, որտեղ դրա հետևանքով *āz* առաջին դեմքի եզակի թվի դերանունը գրեթե դուրս է մղված դրա թեք ձևի՝ *mə-ի* կողմից:

14. Թալիշերենի Անբարանի բարբառի բառապաշարը բաղկացած է երկու շերտից՝ բնիկ բառեր և փոխառություններ, որոնք բաժանվում են տարբեր ենթաշերտերի: Այսպես, բնիկ բառերը, որոնք կազմում են այս բարբառի հիմնական բառաֆոնդի մեծ մասը, ներառում են համաիրանական տարածում ունեցող ընդհանուր ձևեր և բառապաշարային միավորներ, որոնք առկա են միայն մերձկասպյան լեզուներում կամ նորագարիական (թաթական) բարբառներում, իսկ մի մասն էլ բացառապես թալիշերենում: Փոխառությունների շերտը հիմնականում բաղկացած է պարսկական և թյուրքական բառերից, իսկ մի շարք արաբական, ֆրանսիական և անգլիական ձևեր էլ թալիշերենի Անբարանի բարբառի բառապաշար են մուտք գործել պարսկերենի միջնորդությամբ:

### **Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝**

1. Ավյան Հ., Առաջնալեզվային *r* ձայնորդը թալիշերենի Անբարանի բարբառում // Արևելագիտության հարցեր, հ. 9, Երևան, 2015, էջ 479-483:
2. Ավյան Հ., Տարու և այլասացություն: Թալիշերենի Անբարանի բարբառի բառապաշարում «գայլ» և «օձ» բառերի ստուգաբանական քննություն // Կանթեղ, տ. 4 (65), Երևան, 2015, էջ 47-53:
3. Ավյան Հ., Հայերենի և թալիշերենի Անբարանի բարբառի միջև ձևաբանական մի ընդհանրության շուրջ // Էջմիածին, Ս. Էջմիածին, 2016, փետրվար, էջ 106-109:

## **АКОП ВАРДАНОВИЧ АВЧЯН АНБАРАНСКИЙ ДИАЛЕКТ ТАЛЫШСКОГО ЯЗЫКА**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 23 мая 2016г. в 15<sup>00</sup> часов, на заседании специализированного совета ВАК 019 по лингвистике, действующего в Институте языка имени Р. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

### **РЕЗЮМЕ**

Талышский язык входит в северо-западную группу иранских языков и на основе ряда фонетических, морфологических и лексических критериев традиционно делится на три диалектные группы: северные, центральные и южные. Анбаранский диалект принадлежит к группе северных талышских диалектов и распространен в Анбаранском районе Наминской области Ардебильской провинции Исламской Республики Ирана, в городе Анбаран и в близлежащих селах. Среди северо-талышских диалектов анбаранский диалект является крайне южным и, таким образом, граничит с центрально-талышскими диалектами.

Большинство работ, посвященных талышскому языку, было выполнено на материале талышских диалектов и говоров, распространенных в Азербайджанской Республике, в то время как анбаранский диалект, входящий в эту же северную группу, стал объектом исследования лишь в двух небольших публикациях, которые выполнены довольно поверхностно, а материалы и особенности данного диалекта отражены лишь очень фрагментарно и частично.

Данная диссертация, которая написана на основе применения разных лингвистических методов (описательный, историко-сравнительный, типологический), состоит из введения, трех глав с соответствующими параграфами, заключения и списка использованной литературы. Во введении детально образом обсуждается история изучения талышского языка и дается обзор литературы по тематике. В данном разделе диссертации также рассмотрены проблемы определения места талышского языка среди иранских языков, диалектической классификации талышских диалектов и говоров, географического распространения анбаранского диалекта.

В первой главе, «Фонетика», с помощью историко-сравнительного метода описывается и детально рассматривается вся фонетическая система анбаранского диалекта талышского языка. Весь состав вокализма и консонантизма данного диалекта представлен в диахронической перспективе, начиная от древнеиранской языковой эпохи до настоящего состояния диалекта. В отдельном параграфе также исследованы фонетические изоглоссы, соединяющие анбаранский диалект с другими северо-западными иранскими языками.

В системе вокализма важная особенность анбаранского диалекта выражена в характере гласного звука “u”, по которой этот диалект отличается от других северо-талышских диалектов: если в талышских диалектах и говорах Азербайджанской Республики “u” является переднеязычным гласным, то в анбаранском диалекте в подавляющем большинстве случаев это заднеязычный гласный звук. Главная особенность в консонантизме отражается в сонанте “r”, который отличается своим крайне неустойчивым статусом и в течение исторического развития исчезает из большинства древнеиранских основ.

Вторая глава, «Морфология», посвящена синхронному и диахроническому анализу морфологического строя анбаранского диалекта, в случае необходимости в соответствующих разделах частично освещены также важные вопросы синтаксиса. В анбаранском диалекте существительное имеет грамматические категории числа и падежа. Косвенный падеж образуется путем добавления окончания -ə, при этом слова, оканчивающиеся на гласный, не получают это окончание, что приводит к контаминации форм прямого и косвенного падежей.

В ходе исторического развития языка исчезли особые способы образования степени сравнения качественных прилагательных: в настоящем сравнительный и превосходный степени отражаются с помощью послелога -sa и слова һама «все». Количественные числительные продолжают те же древнеиранские основы, что в других иранских языках. Порядковые числительные образуются от количественных числительных при помощи суффиксов -om, -min, -minji. Важнейшие особенности морфологического строя анбаранского диалекта выявляются в глагольной системе этого диалекта. С одной стороны, глагольная система анбаранского диалекта вместе с северо-талышскими диалектами Азербайджанской Республики отличаются от центральных и южных диалектов отсутствием прогрессивных временных форм, с другой стороны, между глагольными системами анбаранского диалекта и других северо-талышских диалектов также выявляются серьезные различия, например, в образовании настоящего времени изъявительного наклонения или в системе глагольных основ.

В третьей главе, озаглавленной «Лексика», исследуется лексический состав анбаранского диалекта. В этом разделе диссертации рассмотрены разные пласты лексики. В первой части главы приводится обширный список слов основного лексического фонда диалекта, все лексемы классифицируются по разным семантическим группам. Вторая часть главы посвящена анализу лексических единиц по принципу происхождения: исконные слова и заимствования. Эти группы, в свою очередь, разбиты на подгруппы по определенным признакам.

В заключении диссертации приведены итоги проведенной работы и представлены результаты исследования.

**НАКОВ VARDAN AVCHYAN**

## THE ANBARANI DIALECT OF THE TALYSH LANGUAGE

Thesis for the PhD of Philology, specialty 10.02.06 "Ancient and

Modern Languages of Asia"

Defense will be held on 23 May, 2016 at 15<sup>00</sup>, at the session of Specialized Council on Linguistics 019 of HAC in the Institute of Language after Hr. Acharyan NAS RA (address: Yerevan, 0015, Grigor Lusavorich str. 15).

The Talysh language belongs to the Northwestern group of Iranian languages and traditionally is divided into three dialectal clusters (Northern Talyshi, Central Talyshi, Southern Talyshi), based on phonological, grammatical and lexical phenomena. The Anbarani is a Northern Talyshi dialect spoken in Anbaran district of Namin area (Ardabil province) of Iran, in the city of Anbaran and adjacent villages. The Anbarani dialect is the most southern among Talyshi dialects, thus geographically it contacts with Central Talyshi dialects.

The absolute majority of publications concerning the Talysh language are based on the materials of the Talyshi dialects spoken in the Republic of Azerbaijan, while the Anbarani dialect, which belongs to the same Northern group, has become the topic of study only in two small-volume publications, presenting quite superficial, and fragmentary picture of the features and peculiarities of this dialect.

This dissertation, which is written applying various linguistic methods such as descriptive, historical comparative, typological, consists of an introduction, three chapters divided in a number of paragraphs, conclusions and a bibliography. In the introduction the history of the Talysh language studies is discussed in detail and a review of publications in this field is presented. This part of the dissertation also deals with the problems of position of Talyshi among Iranian languages, classification of Talyshi dialects and varieties as well as the geographical distribution of the Anbarani dialect.

In the first chapter, entitled "Phonetics", the whole phonetic system of the Anbarani dialect of the Talysh language is described and examined by the means of the historical comparative method. The whole system of vowels and consonants in the dialect is described from the diachronic perspective from the Old Iranian period up to the current state of the dialect. In a separate paragraph the phonetic isoglosses, linking the Anbarani dialect and other Northwestern Iranian languages, are also studied in detail.

In vocalism one of the main features of the Anbarani dialect is clearly reflected in the features of the vowel "u", by which this dialect differs from other Northern Talyshi varieties: in the Talyshi dialects spoken in the Republic of Azerbaijan the vowel "u" shows characteristics of a front pronunciation, while in the Anbarani dialect in most cases this is a back vowel. The most important peculiarity of the consonant system is related to the sonorant "r", which is distinguished by its extremely unstable status, and during the historical development of the language it has dropped from the most Old Iranian roots.

The second chapter entitled “Morphology” is dedicated to the synchronic and diachronic analysis of morphological structure of the Anbarani dialect. If necessary in the relevant sections of the chapter some important problems of syntax are also partially discussed. In the Anbarani dialect the noun has the grammatical categories of number and case. The oblique case is formed by adding the suffix -ə, at the same time the words ending by a vowel do not get the above-mentioned suffix, which leads to contamination of forms of direct and oblique cases.

In the course of the historical development of the language the Anbarani dialect has lost the special means of the formation of comparative and superlative forms of adjectives: nowadays comparative and superlative adjectives are formed analytically by the postposition -sa and the word hama “all, everyone”. Cardinal numbers derive from the same Old Iranian roots as in other Iranian languages. Ordinal numbers are formed from cardinal numbers by adding the suffixes -om, -min and -minji. The most important and most worthwhile features of the morphological structure of Anbarani come to light in the verb system of this dialect. On the one hand, the verb system of the Anbarani dialect along with the Northern Talyshi dialects spoken in the Republic of Azerbaijan differs from the Central and Southern dialects by the lack of progressive tense forms, on another, one can find some important and significant differences between the verb systems of Anbarani and other Northern Talyshi dialects, such as the formation of the present tense of the indicative or the system of verb stems.

The third chapter - “Lexicon” is dedicated to the complex study of the lexical structure of the Anbarani dialect, in which we deal with the different strata of the lexicon. In the first part of the chapter a comprehensive wordlist from the basic lexical fund of the dialect is given, in which the words are classified within different semantic groups. In the second part of the chapter the lexemes are discussed from etymological perspective such as native words and Persian, Arabic or European borrowings. All these groups of words in their turn are analyzed and divided into sub-groups based on appropriate characteristics and criteria.

In the last section of the dissertation the results of the research and the main conclusions are presented.